

ԳՐԱՐԱՐԻ ՀԱՐԱԳՐԱՎՈՐ ՊԱՏՃԱՌԱԿԱՆ ԲԱՅԵՐԸ
ԵՎ ՆՐԱՆՑ ԱՐԺՈՒՅԹԸ

Գ. Կ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Մինչև մեր դարի 60-ական թվականները գրաբարի հարադրավոր պատճառական բայերը նպատակային ուսումնասիրության նյութ չեն դարձել: Այդ շրջանի քերականական աշխատություններում գրաբարի հարադրավոր բայերի մասին եղած տեսական նյութը չափազանց հեռու է ամբողջական և համակարգված լինելուց¹:

1966 թ. գիտական շրջանառության մեջ է մտնում պրոֆ. Ալ. Մարգարյանի «Հայերեն հարադիր բայերը» արժեքավոր մենագրությունը, որտեղ հեղինակն առանձնակի ուշադրություն է դարձնում արդի հայերենի լեզվական նյութին: Գրաբարի հարադրավոր պատճառական բայերին հեղինակն անդրադառնում է այնքանով, որքանով անհրաժեշտություն է առաջանում քննարկել դրանց առաջացմանը², բառային ու քերականական իմաստներին վերաբերող հարցեր:

Ներկա աշխատանքի նպատակն է ուսումնասիրել գրաբարի հարադրավոր պատճառական բայերը ոչ միայն արտահայտության և քերականական իմաստի, այլև արժույթի (ենթակառուցյուն, ստորոգառուցյուն, խնդրառուցյուն, պարագառուցյուն) դրսևորման տեսանկյունից:

Հայտնի է, որ զուգաբայության առանձին տեսակ են կազմում այն բայական հարադրությունները, որոնք արտահայտվում են $S_v^{(1)}-S_v$ կաղապարով, որտեղ $S_v^{(1)}$ բաղադրիչի գործառույթով բացառապես հանդես է գալիս տալ բայը, իսկ S_v բաղադրիչի գործառույթով՝ որևէ (բայց ոչ ցանկացած) բայի անորոշ դերբայը: Օրինակ՝ Եւ ոչ ետ նմա Աստուած առնել ինձ շար (Մենդ., ԱԱ, 7)³: Եւ զուղիս փափկութեան քոյ ետուր ըմպել (Ագաթ., 59): Ամենայն ազգաց ետուն վերանալ առհասարակ յարթայութիւնն (Ագաթ., 347) և այլն:

$S_v^{(1)}-S_v$ կաղապարով արտահայտվող բայական հարադրությունների դիմավոր կամ անդեմ լինելը ուղիղ համեմատական է տալ բայով արտահայտված բաղադրիչի դիմավոր կամ անդեմ լինելուն: Հմմտ. մի կողմից՝ տայ բերել (Խոր., 122), տացէ տեսանել (Ագաթ., 103), տայցէ շարչարել (Եզ-

¹ Գրաբարի հարադրավոր պատճառական բայերի ուսումնասիրության պատմության մասին առավել հանգամանալից տե՛ս Ալ. Մարգարյան, Հայերենի հարադիր բայերը, Երևան, 1966, էջ 397—411:

² Հարադրավոր պատճառական բայերի առաջացման մասին տե՛ս սողերիս հեղինակի «Հարադրավոր պատճառական բայերի առաջացման ուղին» զեկուցման դրույթները (ակադ. Գ. Զահեկյանի ծննդյան 77-ամյակին նվիրված գիտաժողովի զեկուցումների թեզիսներ, Երևան, 1997, էջ 34—36):

³ Աստվածաշնչից քաղված լեզվական նյութերը հղվում են հայագիտության մեջ ընդունված համառոտագրություններով:

նիկ, 125), մի՛ տար հանգիստ առնուլ (Փարպ., 149) և այլն, մյուս կողմից՝ ոչ տալ ծաղրել (Խոր., 56), տալ խօսել (Ազաթ., 224), տալ ուտել (Ղուկ., Ը, 56), համապատասխանաբար, դիմավոր և անդեմ բարդությունները, որոնցից առաջինների գործառական հաճախականությունը գրաբարում ավելի քան ակրնհայտ է՝ արտահայտված թե՛ դրական և թե՛ ժխտական խոնարհման ձևերով, ինչպես՝ ոչ ետ դառնալ (Ա Քազ., ԺԸ, 2), չետ յիշել (Բուզ., 227), ետ ածել (Ազաթ., 452), տայ սպանանել (Խոր., 286) և այլն:

5-րդ դարի լեզվական աղբյուրներում հարադրավոր պատճառականների Տ_v⁽¹⁾ բաղադրիչը ավելի հաճախ հանդես է գալիս Տ_v բաղադրիչից առաջ, Օրինակ՝ Ես տաց անել քեզ ուլ այծեաց ի խաշանց իմոց (Մննդ., ԼԸ, 17): Շապուհ կապէ զոտս Արշակայ... շղթայիւք եւ տայ տանել յերկիրն Խոժաստանի՝ յԱնուշ կոչեցեալ բերդն (Խոր., 300): Այս դեպքում Տ_v կարող բաղադրիչը կարող է տալ բաղադրիչից ընդմիջվել տվյալ խոսքը կազմող այլ անդամներով: Օրինակ՝ Ոչ ետ նմա դառնալ ի տուն հօր իւրոյ (Ա Քազ., ԺԸ, 21): Այլ ժանաւարս տայր նոցա կազմել ամենեցուն (Բուզ., 159): Տացէ՛ ձեզ տեսանել զաշխարհն Հայոց և զընտանիս ձեր (Փարպ., 90) և այլն:

Սակայն հենց 5-րդ դարի լեզվական աղբյուրներում նկատվում է տալ բաղադրիչի վերջադաս կիրառության միտում: Օրինակ՝ Ձոսկերսն ի գերեզմանէն հանել տային և ի գետ արկանել (Թուղթ, 202): Խնայել տայ քեզ յամենայն (Իմաստ., ԺԲ, 16): Բայց արձակել տալ ոչ կարացին (Բուզ., 74) և այլն:

Հետագա դարերում տալ բայի դիմավոր ձևերի վերջադաս կիրառությունը կայունացել և այդպես էլ ժառանգվել է արդի հայերենին: Օրինակ՝ Հա՛մ ձե՛ծել տվի՛ր, հա՛մ ըշտրափո՛ր առ...⁴: Երազել է տալիս մու՛թը, իսկ երազել մենք չենք ուզում⁵ և այլն:

Այսպիսի հարադրությունների մեջ տալ բայը սովորաբար արտահայտում է ներգործական, ինչպես՝ ետ կանգնել (Ազաթ., 59). հազվադեպ նաև՝ կրավորական սեռի քերականական իմաստ, ինչպես տուալ արգելուլ (Եզնիկ, 47)⁶:

Տալ բայի հարադրությամբ կարող են հանդես գալ թե՛ ներգործական, թե՛ չեզոք սեռի անորոշ դերբայներ, ինչպես՝ տաց տանել (Գործ., ԻԾ, 21), ետուր իմանալ (Նէեմի, Ք, 2), տան ըմպել (Ազաթ., 296), տայ ածել (Խոր., 44), տամ կորնչել (Փարպ., 114), տամ ժամանել (Բուզ., 109), տացե լինել (Բ Օրէն., Ե, 29), տամ կալ (Թուղթ, 92), տային ելանել (Եզնիկ, 218), տայ վերանալ (Եզնիկ, 192), տամ գնալ (Փարպ., 143), տայ մեռանել (Փարպ., 100), տամ կեալ (Փարպ., 99) և այլն:

Ընդ որում, այս խմբի բարդությունների մեջ տալ բայի հարադրությամբ հիմնականում կիրառվում են ներգործական սեռի այնպիսի բայերի անորոշ դերբայները, որոնցից «ուցան» ձևույթով ածանցյալ պատճառականներ չեն սերվում: Այդ բայերից են՝ ածել, բերել, կազմել, կոտորել, հանել, դնել, սպանանել, տանել և այլն:

Հարկ է նշել, որ թե՛ չեզոք և թե՛ ներգործական սեռի անորոշ դերբայներով ձևավորված մի շարք պատճառական հարադրություններ գրաբարում ունեն իրենց համանիշ հարադրական տարբերակները: Դրանք հանդիպում են ոչ միայն տարբեր ժամանակաշրջանների հեղինակների կամ միևնույն ժամանակաշրջանի տարբեր հեղինակների երկերում, այլև նույն հեղինակի միև-

⁴ Հովհ. Քումանյան, Երկերի ժողովածու չորս հատորով, հ. 1, Երևան, 1969, էջ 70:

⁵ Պարոյր Սևակ, Երկերի ժողովածու վեց հատորով, հ. 2, Երևան, 1972, էջ 18:

⁶ Տե՛ս Ա. Բագրատունի, Հայերեն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վննետիկ, 1852 թ., էջ 183:

նույն կամ տարբեր ստեղծագործություններում: Հմմտ. տամ ապրել (Բուզ., 107) և՛ ապրեցուցանել (Բուզ., 183), տամ ժամանել (Բուզ., 109) և՛ ժամանեցուցանել (Բուզ., 79), տամ բարբառել (5-րդ դար) և՛ բարբառեցուցանել (10-րդ դար), տամ հանգչել (Թուղթ, 197) և՛ հանգուցանել (Փարպ., 94) և այլն:

Հարադրավոր պատճառական բայերի մեջ տալ բայը հարադրվում է կազմությամբ ոչ միայն պարզ, այլ նաև հարադրավոր անորոշ դերբայների հետ: Ընդ որում, մի դեպքում հարադրավոր բարդությունը հաջորդում է տալ բայի դիմավոր ձևերին, մյուս դեպքում նրա բաղադրիչները տարանջատվում են տալ բայի դիմավոր ձևով: Հմմտ. մի կողմից՝ տային ի միտ առնուլ (Ա. Եղբ., Թ, 49), տայ ոյժ առնել (Թ. Օրէն., Ը, 18), ոչ ինչ տամ վնաս առնել (Եղիշէ, 75), շետ մօտ երթալ (Փարպ., 117), ոչ տայր դուլ առնել (Փարպ., 148), շետ ոգի կլանել (Եղնիկ, 90) և այլն, մյուս կողմից՝ ծաղր ետուփ առնել (Փարպ., 27), երկիր ետ պագանել (Եղիշէ, 85), յանձն ետուփ առնուլ (Փարպ., 83) և այլն:

Տալ բայի հարադրությամբ նույնիսկ զուգաբայեր են կիրառվում, ինչպես՝ Եւ ոչ ոք տայր ժամանել յառնել վարդանայ (Բուզ., 109): Ետ ածել ունել զնա առ ի դուրս սենեկին (Ագաթ., 100) և այլն:

Պատճառական կառույցներում տալ բայի դիմավոր ձևերի հետ որոշ դեպքերում հարադրվում են արդեն իսկ համադրական եղանակով ձևավորված պատճառական բայերի անորոշ դերբայներ, ինչպես՝ տամ խաղացուցանել (Եղիշէ, 48), տամ անցուցանել (Եղիշէ, 48), տայր երեւեցուցանել (Փարպ., 133), տայ կորուսանել (Փարպ., 155), տային փասուցանել (Փարպ., 104) և այլն: Նկատելի է, որ այս տեսակ կապակցությունների մեջ ոչ միայն պատճառական գործողության իմաստն է ցայտուն, այլև սրանց շարահյուսական կապակցելիության հնարավորությունն է մեծ:

Պատճառական բայերով արտահայտված բարդ համադրական կառույցների մեջ սովորաբար տալ բայն անորոշ դերբայի հետ հարադրվում է առաջին բաղադրիչ նախադասության կազմում. հաջորդ բաղադրիչ նախադասության (կամ նախադասությունների) մեջ այն զեղչվում է: Օրինակ՝ Եւ զբազում տեսարս տայր մոբթել և լնուլ խոտով և կանգնել ի վերայ պարսպացն (Բուզ., 157): Զոսկերսն ի գերեզմանէն փանել տային և ի գետ արկանել (Փարպ., 202): Գու զերկոսեանն զայդ ի քում անձին լիով ետուր տեսանել ամենայն Արեաց աշխարհի և փանաչել (Փարպ., 165): Տացէ տեսանել զնա աշաց իմոց և ուրախանալ (Փարպ., 120): Ո՞ տայր ինձ գրել զբանս իմ և փանել զնոսա ի մատեան յափտեան (Յովբ, ԺԹ, 23):

Ինչպես հարադրավոր բայերն ու զուգաբայերն են «պատմողական օճին հատուկ»⁷ բառային միջոցներ, այնպես էլ հարադրավոր պատճառական բայերը: Ա. Մեյեն տեղին է նկատում, որ նշված տիպի բարդություններին «հաճախ դիմում են դասական հայերենի ամենաբնորոշ ներկայացուցիչները...., հետևաբար Եղնիկի պես հեղինակը ավելի քիչ առիթ ունի» այդպիսի բարդություններ գործածելու, քան որևէ պատմագիր⁸:

Գալով հարադրավոր պատճառականների արտահայտության և բովանդակության պլաններին՝ պետք է նշել, որ սրանց մեջ նույնպես առանձնանում են ձևաիմաստային զույգեր կազմող միավորներ: Ընդ որում, այս դեպքում կարևոր դեր են խաղում տալ բայի դիմավոր (կամ անդեմ) ձևերի հետ հան-

⁷ Տե՛ս Ա. Մեյեն, Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, 1978, էջ 385:

⁸ Տե՛ս նույն տեղը:

դես եկող անորոշ դերբայների արտահայտության և բովանդակության պլանները, որոնց հիման վրա առանձնանում են.

1. համանիշներ, *ինչպես՝* տամ մօտել (*Փարպ.*, 170) և՛ տամ մօտ երթալ (*Փարպ.*, 117), տամ ածել (*Փարպ.*, 164) և՛ տամ բերել (*Բուզ.*, 139), տամ կեալ (*Փարպ.*, 99) և՛ տամ ապրել (*Բուզ.*, 107) և այլն,

2. հոմանիշներ, *ինչպես՝* տամ բարբառել (*Փարպ.*, 163) և՛ տամ խօսել (*Թուղթ.*, 189), տամ հանգչել (*Փարպ.*, 85) և՛ տամ դուլ առնուլ (*Փարպ.*, 148), տամ կոտորել (*Ազաթ.*, 172), տամ սպանանել (*Բուզ.*, 199) և՛ տամ մորթել (*Բուզ.*, 157) և այլն,

3. հականիշներ, *ինչպես՝* տամ տանել (*Ծղիշէ.*, 122) և՛ տամ բերել (*Բուզ.*, 139), տամ կեալ (*Փարպ.*, 99) և՛ տամ մեռանել (*Փարպ.*, 180), տամ հանգչել (*Թուղթ.*, 197) և՛ տամ պարապել (*Փարպ.*, 129) և այլն:

Հստ տալ բայի հետ հարադրվող անորոշ դերբայների սեռային պատկանելության՝ գրաբարի պատճառական բայերը բաժանվում են երկու խմբի՝

1. շեզոք սեռի բայերի անորոշ դերբայներով հարադրված պատճառականներ, որոնցում տալ բայի հետ հարադրվում են այնպիսի բայեր, *ինչպիսիք են՝* անցանել, ապրել (*այստեղ՝ «փրկվել»*), բարբառել, բարձրանալ, բնակիմ, գալ, գնալ, դադարել, ժամանել, իշխել, իջանել, լինիմ և այլն:

2. ներգործական սեռի բայերի անորոշ դերբայներով հարադրված պատճառականներ, որոնցում տալ բայի հետ հարադրվում են այնպիսի բայեր, *ինչպիսիք են՝* ածել, անուանել, առնել, առնուլ, բերել, գիտել, գործել, գտանել, գրել, զերծանել, ընթեռնել, ընկենուլ, սպանանել, տանել, տեսանել, փառշել և այլն:

Նշված փաստը այլ բանի արտահայտություն չէ, եթե ոչ ներգործական բայերի՝ գրաբարի բառապաշարում թվային գերակշռության: Ընդ որում, շուրջ 4 տասնյակ շեզոք սեռի անորոշ դերբայների հարադրությամբ ձևավորված պատճառականների մեծ մասն աչքի է ընկնում հազվագյուտ կիրառությամբ, և միայն մի քանիսն ունեն երկու և ավելի անգամ կիրառության դեպքեր: Սրան հակառակ, ներգործական սեռի բայերի անորոշ դերբայներով հարադրված պատճառականները լեզվական աղբյուրների մեջ գործառական տեսանկյունից լրիվ հակառակ պատկեր են ներկայացնում. մի հանգամանք, որ գալիս է խոսելու «տալ-ներգործական սեռի անորոշ դերբայ» կաղապարով արտահայտված պատճառական բայերի՝ գրաբարին առավել հարազատ լինելու օգտին: Այդ է վկայում և այն փաստը, որ տալ բայի հետ ավելի հաճախ գործածական են ակտիվ բառապաշարի մի շարք ներգործականներ, *ինչպես՝* ածել, ասել, բերել, գիտել, ըմպել, ռտել, տանիմ, տեսանել և այլն:

Թե՛ շեզոք և թե՛ ներգործական սեռի անորոշ դերբայներով հարադրված պատճառականները ենթակառու են, ասել է՝ նախադասության մեջ բոլոր հարադրավոր պատճառական բայերը կարող են կատարել պարզ ստորոգյալի շարահյուսական գործառույթ⁹ պարտադիր կերպով պահանջելով կամ ենթադրելով համաձայնության եղանակով կապակցված ենթակա: Օրինակ՝ *Նիխոր տայր ասել ցվահան (Փարպ., 164): Եւ տուաք մեք ածել առ ձեզ զԳրիգորիոս (Ազաթ., 417): Իրաւունքն ոչ ետուն կեալ (Գործ., ԻԸ, 4) և այլն: Սակայն այս կառույցների մեջ ենթական որոշ դեպքերում ոչ թե բառային քերականական արտահայտություն ունի, այլ լոկ ենթադրվում է տվյալ կառույցի*

⁹ Հարկ եղած դեպքում հարադրավոր պատճառականները հանդես են գալիս շարահյուսական այլ գործառույթներով *ես, ինչպես՝ Խելացնորեցոցեալ զնա առ ի տալ պագանել երկիրուրուհանաց (Ազաթ., 80): Վասն ոչ տալ զմեզ բազմաց ծաղրել (Խոր., 35) և այլն: Նկատելի է, որ այս դեպքում տալ բաղադրիչը ևս պարտադիր կերպով անգեմ բայ է:*

բովանդակութեան պլանից, որ սովորաբար պատահում է ենթակայի՝ առաջին կամ երկրորդ դեմքով արտահայտվելու կամ էլ նախորդ խոսքային հատվածում նշված լինելու դեպքում: Օրինակ՝ Այլ մի՛ տայք մեռանել (Փարպ., 180): Ոչ միում մարդոյ ոչ տամ ապրել (Բուզ., 107): Որպէս ինքն կամի, տայ բարբառել նոցա (Փարպ., 163): Քազաւորն կնքէ և տայ բերել առ քեզ (Փարպ., 166) և այլն:

Հարադրավոր պատճառական բայերի ենթական կազմութեան տեսանկյունից սահմանափակություն չի ճանաչում, կարող է լինել և՛ պարզ, և՛ բաղադրյալ: Հմմտ. Ո՞ տացէ ինձ լսել, եթէ ձեռն Տեառն շէր զարհուրեցուցեալ (Յովք, 1Ը, 1) և՛ Ո՞ք ի քշնամեաց կապէր առ վտանգի և նովիմք տայր կալ (Փարպ., 92):

Հարադրավոր պատճառական բայերի բայաձևերի հետ կապակցվող կամ ենթադրվող ենթականերն, ըստ դասային պատկանելութեան, հիմնականում անձնանիշ կամ անձնավորված բառեր են (գոյականներ և դերանուններ): Օրինակ՝ Անդ տայր նմա առնել զեղջիւրն օծութեան (Ազաթ., 214): Սատանայ տտել տայ զկարգն (Եզնիկ, 309): Նա ետ բերել աղ (Բուզ., 139): Տուաք մեք քեզ գիտել (Բ Եզր., Դ, 16) և այլն:

Այս կառույցների մեջ անձնանիշ ենթականի առկայությունը պատահական չէ. բանն այն է, որ այս դեպքում արտահայտվում է միջնորդավորված, մեկի պատճառով կատարվող (կատարված կամ կատարելի) գործողություն, որի հեղինակը, նախաձեռնողը կամ միջնորդը առաջին հերթին կարող է անձ անվանող ենթական լինել: Հենց այդ է պատճառը, որ հարադրավոր պատճառական բայերով արտահայտված կառույցներում իր կամ վերացական առարկա անվանող ենթակաները չափազանց հազվադեպ են: Ահավասիկ՝ Իրատունն ոչ ետուն կեալ (Գործ., ԻԸ, 4): Իւր իսկ վատ գործն շտան դմա կեալ (Փարպ., 99): Տիրելի քո ամենեցուն խնայել տայ քեզ յամենայն (Իմաստ., ԺԲ, 16):

Տեսականորեն հարադրավոր պատճառական բայերից զբաբարում ստորոգառութեամբ կարող էին բնութագրվել «տալ-էական բայի անորոշ դերբայ» կաղապարով արտահայտվածները, որտեղ էական բայերը (գոմ, եմ, լինիմ) չեզոք սեռի են: Լեզվական փաստերը ցույց են տալիս, որ էական բայերից տալ բայի հարադրութեամբ ստորոգառու պատճառական է ձևավորում միայն լինիմ բայի անորոշ դերբայը, ինչպես՝ Չտայ լինել հայր որդւոց այնմ (Եզնիկ, 20): Չետուն լինել նմա արժանի թողութեան (Փարպ., 140): Դու ետուր խոտանաբակ լինել խիստ և անօրէն թագաւորին բաբելացւոց (Ազաթ., 98):

Խնդրառութեան տեսանկյունից հարադրավոր պատճառական բայերը միատարր չեն: Տալ բայի և չեզոք սեռի բայերի անորոշ դերբայների հարադրումով ձևավորված բարդությունները թեև 5-րդ դարում տալ բաղադրիչի շնորհիվ արդեն ձեռք են բերել միջնորդավորված գործողության գաղափար, սակայն դեռևս չեն անվանում անցողական սեռի գործողություն. չեզոք սեռի բայերն են¹⁰:

Բանն այն է, որ տալ բայն ինքը խնդրառութեամբ երկարժույթ է. այն կարող է պահանջել մի սեռի և մի բնութեան խնդիր: Օրինակ՝ Ոչ տամ զփառս

¹⁰ Այսուհանդերձ, տալ բայով և չեզոք սեռի բայերի անորոշ դերբայներով բաղադրված պատճառականներից 5-րդ դարում առանձնանում են մեկ-երկուսը, որոնք (ամենայն հավանականությամբ, ներգործական սեռի բայերի անորոշ դերբայներով հարադրված պատճառականների համարանություն) ոչ միայն իմաստով են պատճառական, այլ նաև սեռի քերականական կարգի փոփոխություն են կրել. պահանջում են հայցական հոլովով արտահայտված սեռի խնդիր: Օրինակ՝ Օղս ոչ ի վեր տայ վերանալ և ոքի՛ խոնարհ հակել (Եզնիկ, 192): Եւ հաւատովքն, զար Լաուր զօրանալ ի մարդիկ (Բուզ., 169):

իմ այլում (Եղիշէ, 109): Զգունդն առաջին տայր ի ձեռն իշխանին Արծրու-
նեաց (Եղիշէ, 116) և այլն: Այն դեպքում, երբ տալ բայի սեռի խնդիրն ար-
տահայտված է ոչ թե առարկան անվանող բառով, այլ գործողություն անվա-
նող անորոշ դերբայով, տեղի է ունենում տալ բայի դիմավոր կամ անդեմ
ձևի և անորոշ դերբայի հարադրում, որտեղ տալ բայն իր իսկ պահանջած սե-
ռի խնդրի՝ անորոշ դերբայի հետ դառնում է բառային մեկ ամբողջություն:
Վերջինս, քանի որ բաղադրված է շեղոք սեռի անորոշ դերբայով, զուրկ է սե-
ռի խնդրառական արժույթից:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տալ բայի և շեղոք սեռի անո-
րոշ դերբայի հարադրումով ձևավորված պատճառական բայերը կարող են
պահանջել մեկ, հազվադեպ՝ երկու խնդիր:

Այն դեպքում, եթե տալ բայի հետ հարադրված շեղոք սեռի անորոշ դեր-
բայը խնդրառության տեսանկյունից արժույթազուրկ է, տվյալ հարադրավոր
պատճառականը խնդրառությամբ միարժույթ է. պահպանում է միայն տալ
բայի բնության խնդրառական արժույթը: Օրինակ՝ Դու ետուր խոտաճարակ լի-
նել խիստ և անօրէն քաղաւորին բարեւացւոց (Ագաթ., 98):

Իսկ եթե խնդրառու է նաև տալ բայի հետ հարադրված շեղոք սեռի անո-
րոշ դերբայը, ապա, բնականաբար, տվյալ պատճառական բարդությունը
խնդրառությամբ երկարժույթ է: Օրինակ՝ Տիրելդ թո ամենեցուն խնայել տալ
քեզ յամենայն (Իմաստ., ԺԲ, 16): Ետ Տէր պատերազմել որդւոցն Ամոնայ
ի վերայ Մովաբու (Բ Մնաց., Ի, 22)¹¹: Ինչ ի գործ ոսկեհատին շետ ինչ մօտ
երթալ (Փարպ., 117) և այլն:

Նշված կաղապարով արտահայտված եռարժույթ հարադրավոր պատճա-
ռական բայեր գրաբարի լեզվական աղբյուրներում վկայված չեն: Պատճառն
այն է, որ խնդրառությամբ երկարժույթ շեղոք սեռի բայերն իրենք էլ, նախ՝
գրաբարի բառապաշարում մեծ թիվ չեն կազմում և, երկրորդ՝ աչքի չեն ընկ-
նում գործառական հաճախակիությամբ:

Տալ բայի և շեղոք սեռի անորոշ դերբայի հարադրումով ձևավորված
միարժույթ և երկարժույթ պատճառականների՝ տալ բայի կողմից պահանջ-
ված խնդիրը, փաստորեն, պարտադիր է և հիմնականում արտահայտվում է
տրական հոլովով: Օրինակ՝ Եւ ամենևին ոչ տային դիւլ և դադարել նոցա
(Բ Մակ., Ժէ, 2)¹²: Բայց փութա՛ և մի՛ տար առն հանգիստ առնուլ (Փարպ.,
149): Սկսան խօսել յայն լեզուս, որպես և հոգին տայր բարբառել նոցա (Ա-
գաթ., 248): Ո հայի յերկիր և տայ դողալ տմա (Սաղմ., ՃԳ, 32) և այլն:

Տրական հոլովից բացի՝ պատճառական բայերի բաղադրիչ տալ բայի
պահանջած բնության խնդիրը կարող է արտահայտվել նաև՝

1. «տրական հոլովածե-բացառական հոլովածե» մասնակաղապարով:
Օրինակ. Միում ի մէնջ ոչ տային ապրել (Եղիշէ, 61):

2. բացառական հոլովով, որի հետ տրական հոլովով բաղադրիչը (տրվ-
յալ նախադասության բովանդակության պլանում ենթադրվելու պատճառով)
չի կիրառվել: Ահավասիկ՝ Եւ ի սերմանէ քումմէ մի՛ տացես ժառայել իշխանի
(Ղևտ., ԺԸ, 21):

Թեև մի շարք նախադասությունների մեջ տրական հոլովածեով բնության
խնդիրը բառային արտահայտություն չունի, սակայն այն ենթադրվում է տրվ-
յալ նախադասությունների բովանդակության պլանում: Օրինակ՝ Այլ մի՛ տայթ

¹¹ Հմմտ. Տէր ետ պտտերազմ ընդ հակառակորդն Իսրայէլի (Բ Մնաց., Ի, 29):

¹² Հմմտ. Վահան ոչ տայր դուլ առնուլ զօրօք իւրովք Պարսկաց ի զակշին (Փարպ., 148)
ձ՝ Վահան ոչ տայր դուլ եւ դողար զօրավարին Հայոց Վարդանայ (Փարպ., 60): Ոչ տայր դուլ
անձինն և ոչ զօրացն (Փարպ., 150):

սեռանել (իզատենչին) (Փարպ., 180): Բայց եթէ լաւագոյնք ևս և քաջք շերե-
վին, այլ ի խոնարհ սակաւ մի և նուազ, շտայի երևել յնոցա— Գ. Խ. (Փարպ.,
137):

Ինչ վերաբերում է պատճառական բայերի անորոշ դերբայով արտա-
հայտված բաղադրիչների պահանջած խնդիրներին, ապա դրանք՝

1. բնության խնդիրներ են (առանց բացառութեան),

2. արտահայտվում են հիմնականում նախդրավոր կապակցութեամբ,
հազվադեպ՝ հոլովածակով: Օրինակ՝ Ոմանց ակամայ երկիր ետ պագանել արե-
գական (Ծղիշէ, 85): Չտայցէ ուշաբերել նաև ապաշխարութեան (Ծղիշէ, 74)
և այլն:

Գալով տալ բայի և ներգործական սեռի բայերի անորոշ դերբայի հա-
րադրումով ձևավորված պատճառականներին, պետք է նշել, որ հենց հինգե-
րորդ դարում դրանք ոչ միայն միջնորդավորված գործողութիւն են անվա-
նում, այլ նաև անցողական սեռի բայեր են և ներկայացնում են վերջիններիս
պատճառական տեսակը:

Բանն այն է, որ այս դեպքում ևս, ինչպես շեղոք բայերը անորոշ դեր-
բայների հետ հարադրվելիս, խնդրառութեամբ երկարժույթ տալ բայը, պահ-
պանելով բնութեան խնդիր առնելու հատկութիւնը, կորցնում է իր սեռի խըն-
դիրը, քանի որ վերջինիս հետ դառնում է մեկ բայական բարդութիւն: Օրի-
նակ՝ տալ նմա բերել, տալ նոցա սպանանել և այլն: Սակայն բաղադրված
հարադիր բարդութիւնը, ըստ խնդրառութեան, ոչ թե մի-արժույթ է, այլ առ-
նըվազն երկարժույթ. տալ բաղադրիչը պարտադիր կերպով պահանջում կամ
ենթադրում է մի բնութեան խնդիր, իսկ ներգործական սեռի անորոշ դերբա-
յով արտահայտված բաղադրիչը՝ մի սեռի խնդիր¹³: Օրինակ՝ Ձանէծս ետ մեզ
ժառանգել (Բուզ., 103): Եւ զայն ետ ձեզ ուտել (Ղևտ., Ժ, 17) և այլն:

Նշված տեսակի կառուցների հետ չպետք է շփոթել «Զի ես արժանի եղէց
պահել զուանդութիւն լուսաւորութեան հաւատոցս, զոր ետուր ինձ ճանաչել
գճեզ» (Ղևտ., Ժ, 17) կարգի նախադասութիւնները, որտեղ ետուր ճանաչել-ը
ոչ թե հարադրավոր պատճառական բայ է, այլ նպատակի պարագա, որը
եկզ-ի հետ դերբայական դարձված է կազմել:

Հարադրավոր պատճառական բարդութիւնների մի մասն արտահայտվում
է «տալ— համադրական պատճառական բայի անորոշ դերբայ» կաղապա-
րով¹⁴, որտեղ տալ բայի հետ համադրվում են թե՛ սկզբնատիպ շեղոք և թե՛
սկզբնատիպ ներգործական պատճառական բայեր, ինչպես՝ անցուցանել, ե-
րեւեցուցանել, խաղացուցանել, կորուսանել, հասուցանել, ուսուցանել և այլն:
Նշված կաղապարով արտահայտված հարադրավոր պատճառականների խընդ-
րառական արժույթը ուղիղ համեմատական է այս կամ այն հարադրութիւնը
կազմող բաղադրիչների խնդրառական արժույթների գումարին: Այսպես՝ եթե
տալ բայի հետ հարադրվում է միարժույթ պատճառական բայի անորոշ դեր-
բայ, ապա տվյալ հարադրավոր բայը խնդրառութեամբ երկարժույթ է, իսկ
եթե տալ բայի հետ հարադրվում է երկարժույթ պատճառական բայի անորոշ
դերբայ, ապա ձևավորված հարադրութիւնը խնդրառութեամբ երկարժույթ է
և այլն: Օրինակ՝ «Ջարուեստ գըշութեան ուսուցանել տալով իւրոց մանկագոյն

¹³ Սեռի խնդիրը կարող է արտահայտվել նաև մի երկրորդական նախադասութեամբ, ինչ-
պես՝ Տո՛ւր ինձ գիտել՝ ո՞վ են լեւիմբէն այնտե՛իկ (Բուզ., 143): Տայր գիտել, եթէ որպես յա-
ռաջնումն օգնեալ Աստուած յուսացելոց իւրոց (Փարպ., 126): Ծտուք գործել ինձ, զոր ինչ ոչ
կամէի (Ծղիշէ, 81): Եւ ոչ որում ցանկացեալ էք, վաղվազակի տամ գտանել (Ծղիշէ, 48):

¹⁴ «Տալ-ներգործական սեռի բայի անորոշ դերբայ» կաղապարով արտահայտված հարա-
դրավոր պատճառականների մեջ ուսումնասիրում ենք նաև «տալ բայ-համադրական պատճա-
ռական բայի անորոշ դերբայ» կաղապարով արտահայտված պատճառականների արժույթը:

աշակերտացն» (Խոր., 327) նախադասութեան ուսուցանել տալ-ը խնդրառութեամբ եռարժույթ է: Անհրաժեշտ է նշել, որ բերված նախադասութեան խնդիրներին մեկը բառային արտահայտութիւն չունի, քանի որ գործողութիւնը տվյալ խոսքային իրադրութեան մեջ անորոշ անձի է վերագրված (ո՞ւմ ուսուցանել տվեց):

Ուսումնասիրութիւնը ցույց է տալիս, որ եթէ հարադրավոր պատճառականի՝ ներգործական սեռի բայի անորոշ դերբայով արտահայտված բաղադրիչն ըստ խնդրառութեան միարժույթ, երկարժույթ կամ եռարժույթ է, ապա դրանով ձևավորված պատճառականը խնդրառութեան տեսանկյունից դառնում է, համապատասխանաբար, երկարժույթ, եռարժույթ կամ քառարժույթ: Օրինակ՝ Ետ տանել նմա թուղթ աղաչանաց (Խոր., 149): Զոր յառաջնումն բանսարկութեամբ ետուն մերժել զնա Հայք Շապհոյ աբխալին ի թագաւորութենէ Հայոց (Փարպ., 18): Եւ հօրն իւրում ետ տանել նոյնպէս տասն իշոյ բերինս յամենայն բարութեանցն Եգիպտացոց ի ճանապարհ (Մենդ., ԽԵ, 23): Ես տաց ածել քեզ ուլ այժեաց ի խաշանց իմոց (Մենդ., ԼԸ, 17) և այլն¹⁵:

Հարադրավոր պատճառական բայերի պահանջած սեռի խնդիրը գրաբարում արտահայտվում է հայցական հոլովով: Օրինակ՝ Եւ ետ քեն զտեղի ունել (Բուզ., 94): Տիրիթն զեղբայր իւր ետ կորուսանել (Բուզ., 103): Սատանայ տանել տայ զկարգն (Եզնիկ, 309): Զիա՞րդ զբարիոք աբաբաձսն իւր տայցէ շարշարել (Եզնիկ, 125) և այլն:

Որոշ բայեր, որոնց պահանջած սեռի խնդիրը գրաբարում արտահայտվում է տրական և ոչ թե հայցական հոլովով, տալ բայի հետ հարադրված ժամանակ նույնպես պահանջում են տրականով սեռի խնդիր առնելու զորութիւնը: Այդ բայերից է իշխել-ը: Օրինակ՝ Իսկ յերկրորդին լոկ միայն վասն կարօտութեան պիտոյից ետ իմիք իշխել և իմիք շիշխել (Բուզ., 70—71):

Կան հարադրավոր պատճառականներ, որոնց բաղադրիչ անորոշ դերբայը բարդութեան մեջ ևս պահանջում է կրկնակ ուղիղ խնդիր պահանջելու զորութիւնը: Օրինակ՝ էջ Աստուածորդին՝ տալ անուանել զայրն իւր այր առաջին (Ագաթ., 217):

Հարադրավոր պատճառականներին՝ ներգործական սեռի անորոշ դերբայով արտահայտված բաղադրիչը կարող է հայցականի փոխարեն պահանջել բացառականով արտահայտված կրող առարկա. վերջինիս բովանդակութեան պլանում առկա է գործողութիւնն իր վրա կրելու ոչ թե ամբողջականութեան, այլ մասնականութեան գաղափար: Օրինակ՝ Տաց նմա ուտել ի մանա-նայէն (Յայտ., Բ, 17): Եւ երանելի կաթողիկոսն Հայոց Յոհան տայր սաղմոսել ի սաղմոսէն քսաներորդէ իններորդէ (Փարպ., 126):

Գրաբարի ակտիվ բառապաշարում կան մի շարք բայեր, որոնք թեև ներգործական սեռի (անցողական) բայեր են, սակայն դրանց կրող առարկային՝ սեռի խնդրի առավել քան միարժեք լինելու պատճառով հաճախ խոսքի մեջ հանդես են գալիս առանց տվյալ սեռի խնդիրների: Այսպես՝ ուտել, ըմպել, լսել, խօսել և մի շարք այլ բայեր առանց սեռի խնդրի հանդես են գալիս ոչ թե այն պատճառով, որ դրանց սեռի խնդիրները նախապես նշված են խոսքի նախորդ հատվածներում, այլ այն պատճառով, որ դրանց սեռի խնդիրները

¹⁵ Վերջին երկու նախադասութիւնների մեջ ետ ուտել և տաց ածել հարադրավոր պատճառականները խնդրառութեամբ քառարժույթ են: Տրականով արտահայտված բնութեան խնդիրները (համապատասխանաբար, հօրն, քեզ) ոչ թե տալ բայի պահանջով են հանդես եկել, այլ անորոշ դերբայով արտահայտված բաղադրիչների (տանել, ածել) և կատարում են շահի խնդրի շարահյուսական գործառնութիւն: Ինչ վերաբերում է տալ բաղադրիչի տրականով խնդիրներին, ապա դրանք երկու դեպքում էլ բացակայում են, քանի որ միջնորդավորված գործողութիւնն արտեղ վերագրվում է անորոշ անձանց:

հիմնականում գիտակցվում են նաև առանց նշվելու և որոշակիացվելու: Օրինակ՝ Քաղցեայ, և ետու՛մ ինձ ուտել (Մատթ., ԻԾ, 42): Հերձ զվէ՛մն յանապատին և ետ ըմպելի՞¹⁶ նոցա, որպես ի խորոյ մեծէ (Սաղմ., Իէ, 15): Մառայ, որ ընդ ունկն ոչ լսէ, ընդ մկանունս տան լսել նմա (Եզնիկ, 61): Նա սաստէր ի նոսա և ոչ տայր խօսել նոցա (Եզնիկ, 180):

Պատճառական բայերի պահանջած սեռի խնդիրը խոսքային որոշ հատվածներում չի կիրառվում նաև նախապես հիշատակված լինելու դեպքում: Օրինակ՝ Ամ յամէ թոշակ առնէին և տային տանելի՞¹⁷ նոցա ի մխիթարութիւն (Եղիշէ, 202): Ընդէ՞ր, արքա՛յ, ցայդ վայր միայն ետուր ընթեռնուլ լզգիրս — Գ. Խ./ (Եղիշէ, 13) և այլն:

Տալ բայի և ներգործական սեռի բայերի անորոշ դերբայների հարադրումով ձևավորված պատճառականները այս տեսանկյունից էապես տարբերվում են տալ բայի և շեզոք սեռի բայերի անորոշ դերբայների հարադրումով ձևավորված պատճառականներից: Բանն այն է, որ վերջիններիս պահանջած բրնության խնդիրը կա՛մ որոշակիորեն առկա է տվյալ խոսքաշարում, կա՛մ էլ որոշակիորեն ենթադրվում է տվյալ խոսքաշարի բովանդակության պլանում:

«Տալ — ներգործական սեռի անորոշ դերբայ» կաղապարով արտահայտված հարադրավոր պատճառականների՝ տալ բաղադրիչի կողմից պարտադիր կերպով պահանջվող կամ ենթադրվող բնության խնդիրն արտահայտվում է տրական հոլովով, ինչպես՝ Տացէ ձեզ զնոյն խորհել (Հոռով., ԺԾ, 5): Օրհնէր զԱստուած, որ տայրն խոսել ամբարապետին (Փարպ., 96): Նմին իսկ ետուն կատարել զաղօթան (Եղիշէ, 150):

Խոսքային որոշ հատվածներում հարադրավոր պատճառականներով արտահայտված որոշ նախադասութիւնների մեջ թեև բնության խնդիրը բառային արտահայտութիւն չունի, սակայն այն ենթադրվում է այդ նախադասութիւնների բովանդակության պլանում, և հարկ եղած դեպքում կարելի է վերականգնել, ինչպես՝ Ապշեցոյց, շետ (Ինձ — Գ. Խ.) յիշել (Բուզ., 227): Զսոյն և սպարապետին Մանուէլի սոյնպէս ետ տանել (ի ձեռն Սուրենայ — Գ. Խ.) զթագաւորական պատմուճանն (Բուզ., 207) և այլն:

Խոսքային որոշ հատվածներում տրականով արտահայտվող բնության խնդիրը ոչ միայն բառային արտահայտութիւն չունի, այլև այն չի ենթադրվում այդ նախադասութիւնների բովանդակության պլանում ևս, ուստի հնարավոր չէ որոշակիորեն վերականգնել: Օրինակ՝ թեև «Մին կճեայ կանգնել տայր յճրեսիայ» (Խոր., 159) նախադասության մեջ կարելի է ենթադրել, որ միջնորդավորված գործողության հեղինակները շինարարներ են եղել, այնուամենայնիվ անհնար է ենթադրել, թե որոշակիորեն ո՛ւմ է հանձնարարվել կատարել «կանգնել» գործողութիւնը: Նշված տիպի նախադասութիւնների մեջ խոսքի հեղինակը ոճական հնարանք է ստեղծում՝ շրջանցելու կա՛մ իմացած, բայց անկարևոր, կա՛մ, պարզապես, շիմացած տեղեկութիւնը, ինչպես՝ Եւ կտրեալ զերկոցունց զականջսն՝ ետուն տանել յԱսորեստան (Փարպ., 106): — Զքոյրդ իմ, — ասէ, — և զքեռորդիդ ի բա՛ց տուր ածել (Եղիշէ, 198): Եւ ստիպով յիրաքանչիւր աշխարհ տային հասուցանել վաղվաղակի (Փարպ., 104):

Փաստորեն, այս կարգի նախադասութիւնների մեջ գործողության պատկերավորները մղվում են երկրորդ պլան. գործողության կատարումը ենթադրաբար վերագրվում է անորոշ անձի կամ անձանց:

¹⁶ Հմմտ. Տաճ նմա արքումն (Խոր., 247):

¹⁷ Բերված կառույցի մեջ զեղչված է ոչ միայն սեռի խնդիրը, այլ նաև տրականով բնության խնդիրը (ու՛մեք): Ետցա. ն այս կառույցի երրորդ խնդիրն է՝ շահի խնդրի շարահյուսական գործառնութիւն կառարգը:

Պատահական չէ, որ այս տիպի նախադասութիւններին հաջորդող կառուցներն արդեն անորոշ-դիմավոր միակազմ են: Օրինակ՝ «Ծտ քարշել շարագոյն քան զառաջինսն. և այնչափ սաստիկ քարշեցին, մինչ բազմաց կարծիք եղեն, թէ մեռան» (Եղիշէ, 186) բարդ կառուցի «և այնչափ սաստիկ քարշեցին» նախադասութիւնը անորոշ-դիմավոր բայական միակազմ է, քանի որ դրան նախորդող նախադասութիւն մեջ բառային արտահայտութիւն չունի, և հնարավոր չէ նախադասութիւն բովանդակութիւնից ենթադրել, թե ովքեր են կատարել «Լարշել» գործողութիւնը:

Հարկ է նշել, որ այսպիսի նախադասութիւնների մեջ արտահայտված գործողութիւնը ենթադրաբար կարելի է վերագրել ոչ միայն մեկից ավելի անորոշ անձանց, այլև նույնիսկ մեկ անորոշ անձի, ինչպես՝ Ծտ կապել զնա ձեռս յետս (Ագաթ., 39): Զոր գանիւ տայր նեղել հանապազօր (Փարպ., 80): Ծտ նկարել զտաշտ ի պատկեր զՄուշեղն ճերմական (Բուզ., 159): Եւ կապեալ՝ տայր պահել զգուշութեամբ (Փարպ., 135): Տայր ասել զթագաւորն Յազկերտ (Փարպ., 107): Ծտ բանալ զնամակն (Փարպ., 46) և այլն:

Որոշ պատճառական նախադասութիւններ կառուցվածքային տեսանկյունից ինքնատիպ են այնքանով, որ սրանց մեջ միանգամից զեղչված են կամ ընդհանրապես բացակայում են և՛ սեռի, և՛ բնութիւն խնդիրները, ինչպես՝ Զի դա ոխացոյց և գրգռեաց զարքայն Յունաց ի վերայ թագաւորին Պապայ, մինչեւ ետ սպանանել (Բուզ., 199): Որք գլխաւորք քրիստոնէիցն են ի Հայս, տա՛ւր կոչել, և գան յօժա-րութեամբ (Եղիշէ, 128): Եւ տայ տանել յերկիրն Խոթաստանի՝ յԱնուշն կոչեցեալ բերդն (Խոր., 300):

Տալ բայի դիմավոր ձևերի և շեղոք սեռի բայերի անորոշ դերբայների հարադրութիւնը. պատճառականներից գրաբարում պարտադիր պարագաանութիւնը աշքի են ընկնում հատկապես ընթացք և դադար անվանող անորոշ դերբայների մասնակցութիւնը ձևավորված հարադրավոր այն պատճառականները, որոնք գրաբարի ակտիվ բառաշերտի մասն են կազմում, ինչպես՝ ելանել, անցանել, զնալ, մօտիմ, հանգչիմ, իջանել, շրջիմ, նստիմ և այլն:

Ընդ որում, սրանց մի մասը զորութիւն ունի պահանջելու կամ ենթադրելու մեկ տեղի պարագա: Վերջինս սովորաբար արտահայտվում է կապական կապակցութիւնը կամ դրան համանիշ այլ բառով, ինչպես՝ Ընդէր բնաւ ծառայից տայք շրջել յաշխարհի ձերում (Փարպ., 148): Ընդ որս ոչ ետուր անցանել և Իսրայէլի (Բ Մնաց., Ի, 10): Այլ ոչ ոք տայր մօտել ի դուրս ատենին (Փարպ., 170): Դագարայ իսկ շտամ հանգչել այդք (Թուղթ, 197) և այլն:

Մի շարք շեղոք սեռի բայերով ձևավորված պատճառականներ էլ կարող են պահանջել կամ ենթադրել ոչ թե մեկ, այլ երկու՝ ելակետի և վերջնակետի տեղի պարագաներ, որոնցից մեկը անկարևոր, անորոշ կամ ակնհայտորեն որոշակի լինելու պատճառով ավելի հաճախ զեղչվում է: Օրինակ՝ Ծս աշխարհակորուստ արանց ողջ ոչ տայի գնալ յաշխարհէն Հայոց (Փարպ., 143): Տայր հրոյ իջանել յերկնից յերկիր (Յայտ., ԺԳ, 13): Ոչ երբեք տային նմա ելանել յերկինս (Եզկիկ, 217) և այլն:

Այս դեպքում նույնպես թե՛ ելակետի, թե՛ վերջնակետի տեղի պարագայի՝ բայ-գերագաս անդամի հետ կապակցումը կատարվում է միջնորդական կառավարման եղանակով:

Գրաբարում «տալ— ներգործական սեռի բայերի անորոշ դերբայ» մասնակաղապարով արտահայտված պատճառականներից պարտադիր պարագաանութիւնը առանձնանում են անել, բերել, արկանել, տանիմ, մտնանել, խաղացուցանել, ընկենուլ, անցուցանել և այլ բայեր, որոնք, գրկթե առանց

բացառութիւն, տալ բայի հարադրմամբ բոլոր կիրառութիւնների մեջ պահանջում կամ ենթադրում են տեղի պարագա: Օրինակ՝ Տո՛ւր ածել առ իս արս աւագս Արիս (Փարպ., 164): Զոր յիմ ձեռն ետ ածել (Բուզ., 43): Զոր ետուն ի գունձ Տեառն մուծանել (Յեսու, 2, 24): Ետու զնա ընկենու ի խոր վիրապն (Ագաթ., 78): Տուր տանել յեօքն յեկեղեցիս (Յայտ., Ա, 11): Գրեալ զօրէնս մոգութեան՝ տայ բերել ի Հայս (Փարպ., 43) և այլն:

Ընդ որում, նշված բայերից մի քանիսը (անցուցանել, խաղացուցանել, տանիմ և այլն) ի զորու են միաժամանակ պահանջելու առնվազն երկու կամ երեք տեղի պարագաներ, որոնք միմյանցից տարբերվում են քերականական նրբիմաստներով, սակայն խոսքի բովանդակության պլանում ենթադրվելու կամ անկարևոր լինելու պատճառով միշտ չէ և բոլորը չէ, որ տեղ են գտնում տվյալ խոսքի արտահայտության պլանում: Օրինակ՝ Ի Սագաստան տամ անցուցանել ընդ անճանապարհ տեղիս (Եղիշէ, 48): Իսկ նա վաղվազակի յարժանուստ գիր ողոքանաց տայր տանել առ ճոսս հրամանաւ արքունի (Եղիշէ, 132): Տո՛ւր բերել անտի հող ի սահմանացն Հայոց իբրև բեռնս երկուս (Բուզ., 141) և այլն:

Ներգործական սեռի բայերով հարադրված պատճառականների պահանջած տեղի պարագաները ևս գերադաս անդամի հետ չեն կարող կապակցվել անմիջական կառավարման եղանակով, քանի որ արտահայտվում են միայն կապական կապակցութեամբ¹⁸ կամ շքեքվող խոսքի մասերով, որոնցից վերջիններս սույն աշխատանքի համար ուսումնասիրութեան նյութ չեն ծառայում:

Ոչ պարտադիր պարագառութեամբ լեզվական աղբյուրներում կիրառված են տեսանել, խօսիմ, գտանել և բազմաթիվ այլ բայեր:

Հարկ է նշել, որ այս դեպքում պարագաների մի մասը բայ-գերադաս անդամի հետ կապակցվում է անմիջական կառավարման, մյուս մասը՝ միջնորդական կառավարման եղանակով: Օրինակ՝ Ես միում ումեք զկոհի շտամ տեսանել յայսմ հետէ (Փարպ., 161): Առ մոլեգնութեան քինուն զինչպէտս տային խօսել (Փարպ., 189): Զնոյն գիր մեծաւ զգուշութեամբ տայր տանել ի թագաւորանիստ քաղաքն կայսեր (Եղիշէ, 93): Զբայիսկոպոս և զքահանայս հարկաց պատճառաւ կապեալ՝ յերկիրն Պարսից տայր տանել (Խոր., 301)¹⁹:

ՀԱՍ ԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ագաթ.— Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1909:

Բուզ.— Փաստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883:

Եզնիկ.— Եզնիկայ Կողբացոյ Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826:

Եղիշէ.— Եղիշէի Վասն Վարադանայ եւ Հայոց պատերազմին, Երևան, 1957:

Թուղթ.— Ղազարայ Փարպեցոյ Թուղթ առ Վահան Մամիկոնեան, Տփղիս, 1904:

Խոր.— Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913:

Փարպ.— Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1904:

Г. К. ХАЧАТРЯН — Составные каузативные глаголы грабара и их валентность.— Составные каузативные глаголы грабара выражаются совмещением личных или безличных форм глагола տալ (дать) с

¹⁸ Բացառութիւն են կազմում բացառականով արտահայտված տեղի պարագաները, սակայն պետք է նկատել, որ բացառական ինքն էլ մի նախորդավոր կապակցութիւն է:

¹⁹ Հարադրավոր պատճառական բայերի՝ պարագայական այլ դրսևորումների մասին հարկ չենք համարում նշել, քանի որ այս հարցն արծարծել ենք տալ բայի հետ հարադիր բարդութիւն կազմող բայերին վերաբերող բաժնում:

инфинитивом другого глагола. В этих глагольных сложениях компонент *мш* занимает препозитивное положение и вместе с инфинитивом обозначает опосредованное, каузативное действие. В словарном фонде габара данные каузативы равнозначны глаголам с суффиксом *-пгш* (*мш* *шшш*—*шшпгш*).

Одним из выражений валентности каузативных глаголов в габаре является то, что они все могут иметь или предполагать субъект, в то время как валентность к предикату присуща лишь некоторым каузативным глаголам. Другим выражением валентности каузативных глаголов является их способность иметь или предполагать объект. Однако каузативы, образованные глаголом *мш* + инфинитив непереходного глагола, требуют косвенного дополнения (дополнений) и бывают, соответственно, одновалентные или двувалентные. А каузативы, образованные от глагола *мш* + инфинитив переходного глагола, требуют по крайней мере два дополнения, одно из которых должно быть обязательно прямым, и в основном двувалентным.